

10367

«Հայկական Գրականություն»



«Յուշարար»-ի մասենադարան №№ 10 և 11.

I.

ԸՍՏ ՊԱՏԻԻՐԱՆԱՅ ԹՕՐԱՅԻ

(Հրեական կարգը)

Դրամատիքական էտիւդ մի արարածով.

II.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ

Դրամատիքական էտիւդ մի արարածով.

Հեղին. Գր. Գէ.

Թարգմ. Սալիւմեան:

(«Յուշարար» աղմանախից)

891.71

Գ-40

1913 թ.

ԸՍՏ ՊԱՏԻՐԱՆԱՅ ԹՕՐԱՅԻ

(ՀՐԷԱԿԱՆ ՀԱՐՅԸ)

ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԷՏԻՈՂ ՄԻ ԱՐԱՐԻԱԾՈՎ

Հեղինակ՝ ԳՐ. ԳԷ

Թարգմանիչ՝ ՍԱԼԼԻԻՄԵԱՆ

ԳՈՐԾՈՂ, ԱՆՁԻՆՔ

Ծերունի—հրէայ:

Քրիստոնէոսի:

Աղքատիկ սենեակ, պատուհանի մօտ սեղան, որի վրայ գրքեր, նրան յեն-
 ւած ծերունի հրէան նայում է պատուհանից, որը լուսաւորւած է հրդեհի
 լոյսով:

1001
 ՋԵԻ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒՀԻ.— (Ներս է վազում
 գունատ): Կողպեցէք դուռը... վրան ոչ
 բանալի կայ, ոչ էլ ծառայ կրեաց...

ԾԵՐՈՒՆԻ.— Դանիէլը ձեզ մօտ է:

ՔՐԻՍՏ.— Այո:

ԾԵՐ.— Բոլորը փախել են... Կողպելն
 անողուտ է, երբ կացիներն են ար-
 դէն գործում:

ՔՐԻՍՏ.— (Նրբար ծածկում է ձեռ-
 քերով): Օ՛, ինչ սարսափելի է...

ԾԵՐ.— Ինչո՞ւ էք եկել... ամբողջ
 հիմա չի տարբերում...

ՔՐԻՍՏ.— Է՛հ, ինձ համար միևնոյն
 է... ես ձեզ պիտի տեսնէի հէնց հի-
 մայ, այս րոպէին... Քաղաքը հրդեհի
 մէջ է, սպանութիւններ, արիւն...
 Փառք Աստուծոյ, Դանեան ապահով
 տեղ է... Նա ուզում էր ինձ հետ գալ,
 բայց ես չթողի:

ԾԵՐ.— (Շարժում է զլուխը):

ՔՐԻՍՏ.— Ես ձեր յետից եմ եկել,
 ձին դան մօտ է. ինձ հետ քեզ չեն
 զիջել, գնանք:

ԾԵՐ.— Ո՛չ, օրիորդ, ես չեմ գայ:
 Ինձանից ինչ կարող են խել: Կեանքս...
 նա այլևս ոչոքի պէտք չէ:

ՔՐԻՍՏ.— Բայց դա անմտութիւն է:

ԾԵՐ.— Իմ տունը այստեղ է: Յի-
 սուս Սիրաքը ասել է. «Ուրիշ սեղա-
 նի շուրջը ապրողի համար ամբողջ
 աշխարհը մօայլ է»... Ահա իմ սեղա-
 նը: Տեսնում եք... Նրա վրայ դրւած
 են Աստուածաշունչը, Պէնտատէլը*) և
 որդուս պատկերը: Դա ինձ համար
 լոյս է եղել ամբողջ կեանքումս... Ո՛ւր
 պիտի գնամ ես:

ՔՐԻՍՏ.— Լսեցէք. դուք խելացի ու
 բարի մարդ էք, դուք ինձ պիտի հա-
 կանաք: Դուք գիտէք, թէ ինչպէս եմ

*) Թօրա—Հեղամատեան, Մովսէս մարգա-
 րէի չինգ զեբբէ:

**) Պէնտատէլը՝ Հնգամատեանի յունական
 անունն է:

վերաբերում դէպի Դանեան ու ձեզ... Այսպէս ապրել այլևս անկարելի է: (Յետ նայելով դէպի դռան ու պատուհանը): Է՛հ, ես չեմ կարող այստեղ խօսել. դէ աղաչում եմ, գնանք մեզ մօտ:

ԾԵՐ.—Ես չեմ դուրս գալ իմ տանից... Ձեզ ի՞նչ է պէտք:

ՔՐԻՍՏ.—Աստուած ձեզ հետ: Ես... պիտի խօսեմ ձեր որդու մասին:

ԾԵՐ.—Լսում եմ:

ՔՐԻՍՏ.—Թոյլ տւէք նրան...

ԾԵՐ.—Նա ձեզ մօտ է...

ՔՐԻՍՏ.—Է՛հ, «մեզ մօտ է»... Բա-

նախադրով չգրադէնք: Նա չի կարող

հրէութիւնից կտրել, մինչև որ... դուք

չթոյլատրէք այդ բանը: Դուք գիտէք

իմ հայեացքները: Ես դաստիարակել եմ

արտասահմանում և ընտելացել եմ

համոզմունքների ազատութեան: Ես

կրօնամոլ չեմ: Ինձ համար չկայ յոյն

կամ հրէայ: Ես մարդու մէջ ամենից

առաջ գնահատում եմ մարդուն: Ես

սիրել եմ ձեր որդուն՝ չքննելով, թէ

ո՞վ է նա: Ինձ համար նա եղել է

նոյնպիսի մի ուսու ուսանող, որի նը-

մաններով լի են մեր համալսարաննե-

րը: Բայց ի դէմս նրա ես տեսայ մի

անձնաւորութիւն, որը... Մի խօսքով՝

նա յուզեց ինձ թր սրտով ու հոգով...

ԾԵՐ.—(Վշտազին ժպտալով): Ես իմ

որդուն աւելի լաւ եմ ճանաչում՝ քան

դուք. ի՞նչ հարկ կայ նրան իմ առաջ

գտնելու. է՛հ, դուք նրան էք սիրել,

նա էլ ձեզ. ես վաղուց նկատում էի.

դրանից ի՞նչ...

ՔՐԻՍՏ.—Մեր ամուսնութիւնը այդ-

պիսի պայմաններում անկարելի է:

ԾԵՐ.—Ինչպիսի պայմաններում:

ՔՐԻՍՏ.—Հաւատի տարբերութեան

պատճառով:

ԾԵՐ.—Եթէ անկարելի է, էլ ինչի՞

մասին էք խօսում:

ՔՐԻՍՏ.—Բայց չէ՞ որ պայմանները

կարելի է փոխել:

ԾԵՐ.—Փոխեցէք:

ՔՐԻՍՏ.—Ես չեմ կարող:
ԾԵՐ.—Ինչո՞ւ էք կարծում, որ ես կա-

րող եմ:

ՔՐԻՍՏ.—Ամուսնութիւնը ես հաս-

կանում եմ ինչպէս մի հոգեւոր դաշն՝

համոզմունքների միասնականութեան

ժամանակ: Հակառակ դէպքում մենք

ի՞նչպէս կարող ենք դաստիարակել

մեր երեխաներին: Ջլատել նրանց հո-

գիները: Բարեբաղդաբար, իմ ու Դա-

նիէլի հոգեկան միութիւնը կատարեալ

է: Մենք երկար ու շատ ենք խօսել

այդ մասին: Մնում է ձեռք: Եւ անա-

այդ ձեռք մեր մէջ վիճ է բաց անում...

Ես քրիստոնէութիւն եմ, իսկ նա՝ հրէայ:

ԾԵՐ.—Այդպէս է...

ՔՐԻՍՏ.—Թէև ողով նա նոյնպիսի

քրիստոնէայ է, ինչպէս ես:

ԾԵՐ.—Այդպէս է, այդպէս...

ՔՐԻՍՏ.—Ուրեմն, մնում է, որ ձեռք

էլ ընդհանուր դարձնենք իմ և նրա մէջ:

ԾԵՐ.—Դարձրէք:

ՔՐԻՍՏ.—(Մի փոքր լռելուց յետոյ):

Դուք դիտմամբ չէք հասկանում ինձ:

ԾԵՐ.—Ինչպէս թէ չեմ հասկանում:

Քաղաքը կրակի մէջ է, մեզ կոտորում

են:

ՔՐԻՍՏ.—Տէր Աստուած, Միթէ կա-

րելի է կոյր, վայրենի և խելացիոր

ամբոխից պահանջել, որ խելացիօրէն

դատէ: Երբ ձեր փարիսեցիները խա-

չում էին Քրիստոսին, միթէ գիտակ-

ցում էին իրանց արարմունքի ամ-

բողջ սարսափելիութիւնը:

ԾԵՐ.—Քրիստոսը ուզում էր խաչ-

ւել. նա մահաւան դէմ էր գնում, նա

ուզում էր ոչնչացնել տիրապետող

կրօնը—և նրա հետ վարեցին այն-

պէս, ինչպէս բոլոր ժամանակները

վարել են և վարւում են նոր վար-

դապետութեան քարոզիչների հետ: Այո՛,

դա սարսափելի գործ է եղել, սակայն

օրիորդ, իւրաքանչիւր ժողովրդի մէջ

դուք կը գտնէք թէ սիրոյ պայծառ

գործեր և թէ անհերոգամտութեան

խաւար գործեր:

ՔՐԻՍՏ.—Օ՛հ, այդպէս է, այդպէս...
Եւ ոչ մի ժողովրդի մէջ ես չեմ տես-
նում այնքան անհերոգամտութիւն, որ-
քան հրէաների մէջ... Նրանք չեն խը-
նայում հաւատաւորացներին, նրանք...

ԾԵՐ.—Արդարադատ եղէք, օրիորդ,
յետ նայեցէք պատմութեանը: Մենք
ապրել ենք փիւնիկեցիների, եգիպտա-
ցիների, ասորիների, յոյների, հու-
մայեցիների, նոյնպէս և յետագայ ժո-
ղովուրդների մէջ—և դուք մի օրինակ
անգամ չէք դառնի, որ Իսրայելացիք
հարկադրէին որեւէ մէկին՝ փոխելու իր
կրօնը: Պատմութեան ամբողջ ընթաց-
քում մենք միայն պաշտպանւել ենք:
Բայց յիշեցէք իսաակիւնների արշա-
ւանքները, արիւնահեղ պատերազմնե-
րը յանուն Աստուծոյ, այն Աստուծոյ՝
որը չի թոյլատրում նոյնիսկ չնչին
բռնութիւն մերձաւորի վերաբերմամբ:
Յիշեցէք բողոքականների դէմ վարած
դաժան կռիւները: Բարդուղիմէոսեան
գիշերը, մահմեդականների զագանու-
թիւնները...

ՔՐԻՍՏ.—Այդ ամենը կամ կրօնի
սխալ բացատրութեան օրինակներ են,
կամ գիտաւորեալ հրաժարումն նրա
սկզբունքներից: Այստեղ հաւատը գործ
չունի: Ամեն բան աշխարհում առաջ
է շարժւում... ինչ որ կարելի էր հու-
գեհոտների ժամանակ...

ԾԵՐ.—(Յոյց տալով պատուհանը):
Իսկ սա...

ՔՐԻՍՏ.—Օ՛հ, Տէր Աստուած, ձեր
կրօնը չէ՞, որ խելացիոր խուժանին
գրգռում է ձեր դէմ: Կոյր ու քաղցած՝
նա որոնում է սովի պատճառները և
յարձակւում է նրանց վրայ. որոնց
մէջ նրա պատճառներն է տեսնում:
Ո՞վ է մեղաւոր: Այո, խուժանի տգի-
տութիւնը, բայց նաև ձեր հոգեկան

օտարացումը և անտարբերութիւնը
դէպի երկրի շահերը, երկրի՝ որը ձեզ
համար հայրենիք է դառել, այո, նաև
ձեր առանձնացումը. Ահա այդ ա-

ռանձնացումը, ոչ միայն Ռուսաստա-

նում, այլև ամբողջ աշխարհում—ձեզ
օտար է դարձնում այն ժողովուրդնե-
րի համար, որոնց մէջ դուք ապրում
էք, դուք աւելի փորձաւոր, աւելի կուլ-
տուրական էք, դուք գործունէայ էք
և այդ պատճառով հեշտութեամբ ձեր
ձեռքն էք զցում աշխատանքի ձեզ
համար մատչելի ասպարէզը: Եւ երի-
տասարդ ժողովուրդները միայն բե-
րանները բաց նայում են, թէ ինչ-
պէս ձեր մեծ մարդիկ ոսկով լըց-
նում են իրանց բանկային տները,
ու այդ բանը գրգռում է առաջ բե-
րում ձեր դէմ, որովհետև ձեզանից
վախենում են:

ԾԵՐ.—(Շարժելով գլուխը): Այդ-
պէս ուրեմն, բանը կրօնի մէջ չէ՞...
հապա ինչի՞...

ՔՐԻՍՏ.—Ես չեմ կարող թոյլ տալ,
որ մեր... իմ երեխաները կանգնած
լինեն հին ու նոր օրէնքների սահմա-
նում... նոր օրէնքով են ապրում եր-
կրագնդի բոլոր լուսաւոր ազգերը:
Պէտք է առաջ գնալ և ոչ թէ յետ:
Պէտք է գնալ այն բանի ետևից, ինչ
որ մօտ է ժամանակակից հոգուն...

ԾԵՐ.—Գնացէք... Եւ ձեր յետևից
տարէք Դանիէլին... Միթէ ես ձեզ
խանգարում եմ... Հաւատ... ո՞ւմ հա-
ւատն է աւելի լաւ: Իւրաքանչիւր հա-
ւատացողի համար իր հաւատն է ա-
ւելի լաւը: Ո՞ւմն է աւելի նորը: Հա-
ւատը հազուադէպ չէ... Նոր հազուադէպ
էլ պէտք է սովորել. Ահա, ձեր կրօ-
նը աւելի նոր է՝ քան Մովսէսի օ-
րէնքները և մարգարէների վարդապե-
տութիւնները, իսկ մեր մարգարէնե-
րը սովորեցրել են. «Կտրի՛ր քո հա-
ցից մի կտոր, ընդունի՛ր հալածածնե-
րին քո տանը, եթէ մերկ մարդու
տեսնես—հագցրո՛ւ նրան, երեսդ յետ մի
դարձնի քեզ նմաններից, և այն ժա-
մանակ քո ճրագը կը շողայ առաւօ-
տեան արշալոյսի նման»... Իսկ Թօբան
դեռ շատ դարեր Քրիստոսի ծննդից
առաջ յայտարարեց ազատութիւն, հա-

չափահաս մարդ է, թող ինչպէս ուզում է, անէ...

ՔՐԻՍՏ.—Դուք թոյլ տալիս էք:

ԴԵՐ.—Ե՛ս: Ո՛չ: Բայց նա կարող է ինձ չլսել:

ՔՐԻՍՏ.—Դա նշանակում է կտրուկ ձեզանից, բայց նա անկարող է կտրուկ... Նա չափազանց սիրում է յարգում է ձեզ:

ԾԵՐ.—Աւելի լաւ թէ իր համար և թէ ինձ համար:

ՔՐԻՍՏ.—(Մի փոքր մտածելուց յետոյ): Դուք ասացիք, որ քրիստոնէութիւնը առաջացել է մարգարէների և Մովսէսի վարդապետութեան մարդասէր սկզբունքներից: Ուրեմն քրիստոնէութիւնը հէնց այն նոր, պայծառ և գեղեցիկ վարդապետութիւնն է, որը ձեզանից առաջ է անցել: Ուրեմն, անալոլ հրէայ՝ Դանեան միայն կանցնի Յեսայիանների բարեփոխած ազանդին... Ինչո՞ւ ուրեմն դուք թոյլ չէք տալիս, որ այդ երիտասարդ կեանքը նւիրել լաւագոյնին՝ հէնց ձեր կրօնի օրէնքների համաձայն...

ԾԵՐ.—Օրիորդ, դուք դարձեալ հարցը դնում էք համեմատութեան հողի վրայ: Լաւ, ես էլ այդ տեսակէտը աչքի առաջ կուենամ: Ես ձեզ այսպէս կասեմ: Դանեան մայր ունէր. նա վաղուց արդէն մեռել է: Նա առաջ էլ գեղեցիկ չէր, իսկ ծերութեան հասակում բոլորովին անձուռնի էր դարձել: Դիցուք նրան բերում են մօր մօտ և ասում. «Նայիր, տես ինչի՞նչ է նման. թէ աստամներ չունի, թէ երեսն է կրնձխոնքով ծածկւած, թէ աչքերիցն է արտասուք գնում. բայց անա քեզ մի ուրիշ կին, երիտասարդ, գեղեցիկ... նայիր, ինչպէս հուրը փայլում է նրա աչքերում, ինչպէս արտափայլում են վարդապոյն թշերը: Հրաժարելիք քո մօրից, վերցրու սրան, սա պակաս չի սիրել քեզ»: Դանեան կը նայէ մէկին և միւսին ու կասէ. «Ո՛չ, թողէք ինձ իմ ծերունի մօրը. ինձ աւելի լաւը

պէտք չէ. նա է ինձ ծնել, նա է իմ հարազատը և այդ պատճառով աշխարհումս նա ինձ համար ամենից գեղեցիկն է»: Եւ կը փարի նրա կրծքին, կարտառի սիրուց և ուրախութիւնից, որ նա իր մօտն է...

ՔՐԻՍՏ.—Իսկ եթէ... եթէ նա միւսին ընտրէ...

ԾԵՐ.—Իր գործն է: Այն ժամանակ ծերունի մայրը կասէ. «Եթէ նա ինձ, իր ծնող մօրը փոխեց խորթ մօր հետ, էլ ինչ որդի է. նա խորթ մօր համար էլ կը լինի խորթ որդի. թող դնայ ուր կուզուի է. ինձ պէտք չէ այդպիսի որդին...

ՔՐԻՍՏ.—Դուք սխալւում էք, նա սիրում է երկրորդ մօրը: Նա խոստովանել է ինձ, որ դեռ մանկութիւնից իրան աւելի մօտ է զգացել մեզ՝ քան հին օրէնքին: Նրա հոգին քնքոյշ է, հեզ...

ԾԵՐ. (կամաց): Ասուած թող նւրան բաղդաւորութիւն տայ...

ՔՐԻՍՏ.—Դուք գիտէք, որ առանց ձեր համաձայնութեան՝ նա բաղդաւոր չի լինի: Ինչո՞ւ, ուրեմն, ինչո՞ւ դուք յետ էք մղում նրան այն բանից, ինչ որ պահանջում է նրա սիրտն ու բանականութիւնը... Ես բոլորը վերջացրի, բոլոր ապացոյցները, մի հասցնէք մեզ յուսահատութեան... (Լիւրիւ է):

ԾԵՐ.—Լաւ, օրիորդ, ես կը բերեմ իմ վերջին պատճառաբանութիւնը: Ասենք թէ մենք Աստուծոյ անիծւած ժողովուրդ ենք. մենք մեղանշել ենք, և նա երես է դարձրել մեզանից. աւենք թէ մենք կորցրել ենք մեր բոլոր արժանապատուութիւնները, մենք դարձել ենք ջնուգներ, որոնց վրայ թքում են, ինչպէս անմաքուր կենդանիների վրա: Ես լաւ հասկանում եմ, որ վայելչութիւնը խանդարեց ձեզ մի ապացոյց էլ բերելու. դուք չէք ուզում ջնուգի ամուսին լինել: Ձեր պատիւը թոյլ չի տալիս ձեզ այդպէս

ստորանայու: Ես հասկանում եմ ձեզ: Հիմայ լաւ գնահեցէք մեզ: Առանց հայրենիքի, առանց հողի, ամենքից ատաճ՝ մենք հին ժամանակներից մի գանձ ենք պահպանել: Այդ մեր վերջին գանձը մեր կրօնն է: Մենք նրան կրել ենք մեր ծոցում՝ բոլոր փորձանքների ժամանակ: Ար'ի Գ-րդ օրը*) մեր տաճարը այրւեց ու քաղաքը կործանւեց... և Երեմիան նստած քաղաքի աւերակների վրայ՝ ողբում էր... Մենք էլ ողբացել ենք հայրենիքից հեռու, դերութեան մէջ. «Այնտեղ, Բաբելոնի ավերին նստած՝ մենք ողբում էինք, երբ յիշում էինք մեր Սիօնը... Ողբացող ուռնիները վրայ կախեցինք մեր լուած տաւիղները... Այդպիսի ողբով մենք մեր կրօնը հասցրինք մինչև մեր օրերը... Նա միայն մեզ փրկեց յուսահատութիւնից, նա միայն պահպանեց մեր մէջ վերածնելու յոյսը... Մովսէսի բերանով Աստուած ասաց. «Եւ թշնամիների երկրում չեմ մերժի նրանց, չեմ թողնի, չեմ ոչնչացնի, չեմ զրժի իմ դաշինքը, որովհետեւ ես եմ նրանց յաւիտենական Աստուածը... Եւ դուք ուզում էք, որ մենք ձեռքից տանք մեր միակ դանձը, մեր յոյսը առ միակ Մեսիա, ձեր իրաւահաւասարութեան, ձեր ողորմութեան բարիքների համար... Ո՛չ, թողէք մեզ... Միայն ընդհանուր, հաստատ և անդրդելի հաւատն է մեզ միացնում դեռ: Նա մեր օգն է, մեր կամքը, համբերութիւնը, նա մեր պատիւն է... Իսկ ով նրան դաւաճանում է արտաքին բարիքների համար, նա դաւաճանում է իր և իր ժողովրդի պատէին:

ՔՐԻՍՏ.—(Գլուխը կախելով): Ելք չկայ... Ես այնպէս յոյս ունէի:

*) Ար.—Հրէական 11-րդ ամիսն է: Եբ'ի Գ-ը, որ դալիս է մեր յուլիսի վերջին կամ օգոստոսի սկզբին, Հրէական դժբաղդութեան օր է համարւում: Հրէաների կարծիքով՝ այդ օրն է երեսադեմի տաճարը կործանւել, թէ առաջին և թէ երկրորդ անգամ այդ օրն են Հրէաներին պատերազմ Սպանիայից և այլն:

ԾԵՐ.—Կրկնում եմ, Դանիէլը չափահաս մարդ է:

ՔՐԻՍՏ.—Իսկ եթէ... եթէ...

ԾԵՐ.—Եթէ ինչ:

ՔՐԻՍՏ.—Եթէ արդէն ուշ է:

ԾԵՐ.—Ինչպէս թէ ուշ է:

ՔՐԻՍՏ.—Եթէ մենք... արդէն պատկաւած ենք:

ԾԵՐ.—Չեմ հասկանում...

ՔՐԻՍՏ.—Եթէ Դանեան... արդէն քրիստոնէայ է...

ԾԵՐ.—Ա... արդէն: (Բարկով թիւնը զսպելով՝ սկսում է կամաց լաց լինել, նստելով ակոռի վրայ սեղանի տուայ):

ՔՐԻՍՏ.—(Երկար նայած նրա ոտնների տուայ): Ներեցէք, ներեցէք նրան... աղաչում եմ ձեզ... Մենք այնպէս սիրում ենք միմեանց...

ԾԵՐ.—Տիրուհի, այստեղ անվտանգ չէ... Ես ծեր մարդ եմ, ես չեմ կարող ձեզ պաշտպանել: Հեռացէք այստեղից. հէնց հիմայ կարող են գալ: Հեռացէք...

ՔՐԻՍՏ.—(Հեկեկալով): Խեղճ, խեղճ իմ Դանեա... Աղաչում եմ ձեզ, գնանք մեզ մօտ. մենք ջերմութիւն կընենք ձեզ ծերութեանը. չէ՞ որ մենք ձեր օրդիքն ենք...

ԾԵՐ.—Ո՛չ, դուք օտար էք, օտար... Հեռացէք:

ՔՐԻՍՏ.—(Գնում է դէպի դուռ):

ԾԵՐ.—(Սեղանից վերցնում է պատկերը). Ահա. տէք նրան կամ թողէք ձեզ մօտ... Հիմայ սա ինձ պէտք չէ...

ՔՐԻՍՏ.—(վերցնում է պատկերը):

Եւ դուք չէք խղճալ նրան, երբէք... ԾԵՐ.—(Զրկելով, իր առաջ քայլ է անում Աստածաշունչը):

ՔՐԻՍՏ.—(Յնցելով ականջ է դրնում): Տէր Աստուած, նրանք գալիս են: Շուտով, շուտով այստեղից գնանք... (Յուսահատութեամբ): Դուք ուզում էք մեռնել...

ԾԵՐ. (Երկար ժպտով յետ է նայում): Ես ծեր ու մեռնակ եմ, էլ ինչո՞ւ ապրեմ...

(Աղմուկ փողոցից, կոտրաւող սպարկիներէ ծայրեր):
ԲՐԻՍ.—(Սարսափած փախչում է)
ԾԵՐ.—(Աստաճաշունչը սեղմելով

կրծքին՝ վեր է կենում): Աստաճ Աբ-
րահամի, Իսահակայ և Յակոբի, պան-
պանիր Իսրայէլին: (Ժնկաչոր): Ո՛հ,
Աստաճ, փառք լինի քո անւանը...

ՎԱՐԱԴՈՅՐ



«ՅՈՒՂԱՐԱՐ»-Ի ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՁԵՆ

ԿՈՎ ԿԱՍԵԱՆ ՔԻՇԵՐՆԵՐ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԷՏԻՈԴ ՄԻ ԱՐԱՐՈՒՄՈՎ

Հեղինակ՝ ԳՐ. ԳԼԵ

Թարգմանիչ՝ ՍԱԼԻՄԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՐԶԻՐ

Մարօ,—Վրացուհի, մօտ 25 տարեկան, հագին լաւ կոծիկ (կնոջ վերնա-
զգեստ, բաճկոնակ), գլխին գցած է լաչակ՝ վառ գոյներով:

Արշիլ.—Վրացի, կալանաւորի բաճկոնով (խալաթ), ոտքերը շղթայած. գլու-
խը ածիլած. գլխին դրած է կալանաւորի պատուած գլխարկ: Վհատւած,
հիւանդ տեսքով:

—

Գործողութիւնը կատարուած է հեռաւոր ծայրերէկը, առժամակիր աշխա-
տանքի տեղը. ժայռոտ ծովափ. ծովի տեսարան: Գարուն:

(Մարօն նստած ժայռի վրայ եւ
ծնկները ձեռքերի մէջ առած՝ նայում
է ծովին եւ երգում՝ համաշափ օրօր-
ւերով: Արշիլը ներս է մտնում եւ
ամենկատեղի կերպով մօտենալով Մա-
րօյին՝ կանգ է ստնում նրա ետեւը):

ԱՐՁԻԼ.—Ո՛հ ես նայում, Մարօ:
ՄԱՐՕ.—(Ցնցելով յետ է նայում
եւ վախեցած երկար նայում է Արշի-
լին): Ո՞վ ես դու:

ԱՐՁԻԼ.—Այս ակնքների մէջ դու
նկատում ես Իսրայելի աղքատները, կամ
ձեր խրճիթը Սալբուրմ: Եւ քեզ թւում
է, որ դու քո սեփական խաղողի աշ-
գուհի ես:

ՄԱՐՕ.—(Մի փոքր քարծրանալով
ծնկների վրայ): Արշիլ...

ԱՐՁԻԼ.—(Ժիծաղելով): Ճանաչեցիր:
Իսկ ես վաղուց արդէն ճանաչել էի
քեզ՝ ահա այն ժայռից. բարով տե-

տանք: Մարօ: ՄԱՐՕ.—Դու ինչպէս ծերացել ես.
դժար է ճանաչել... միտք էլ թո-
ղել ես:

ԱՐՁԻԼ.—Հինգ տարին քիչ ժամա-
նակ չէ դարձ ունեցող մարդու հա-
մար: Դարդն է ծերացնում:

ՄԱՐՕ.—(Չարսիկնոյ ժպտով):
Վաղձեց քեզ բերել ես այստեղ:

ԱՐՁԻԼ.—Սպասիր, մի անգամից
պատմել չի կարելի. թոյլ տուր, որ
նստեմ քեզ մօտ:

ՄԱՐՕ.—(Վախեցած): Արշիլ, այ
դիւրսները... ես կըրգաւեմ...

ԱՐՁԻԼ.—Աբաբըն էլ քեզ չի քաշա-
ցրել... (նստում է): Ի՛նչ բղաւիր:

ՄԱՐՕ.—(Յետ քաշելով): Ի՞նչ ու-
նես ինձ հետ խօսելու: Հեռացիր ին-
ձանից:

ԱՐՁԻԼ.—Լաւ ես դիմաւորում հա-

մերկրացուդ. ամբողջ վրաստանում
այդպիսի հիւրասիրութիւն չի կարելի
գտնել...

ՄԱՐՕ.—Դու ինձ մօտ հիւր չես:
Մենք օտար ժայռի վրայ ենք և ինք-
ներս էլ օտար ենք միմեանց... Ե-
րևում է, բարի գործով չես եկել դու
այստեղ: Աւելի լաւ է, հեռացիր կամ
ես կըհեռանամ:

ԱՐՁԻԼ.—Նստիր: Գնալու տեղ չկայ
ոչ քեզ համար, ոչ ինձ համար: Մի
օրով հօ չեն քշել մեզ այստեղ... (Նը-
կար նայում է նրան): Ո՛ւր է քո գե-
ղեցկութիւնը, Մարօ: Ինչո՞ւ համար եմ
ես քեզ սիրելի. կամ տեսողութիւնս է
վատացել: Միայն աչքերդ են առաջ-
ւանդ մնացել, օձի պէս խայթում են...

ՄԱՐՕ.—Քոնը հօ արծւի աչքեր են...
աղբաւ... Թո՛ղ ինձ...

ԱՐՁԻԼ.—(Սպառնալի): Կաց, Մարօ,
ես մեղմութեամբ սկսեցի խօսքս, լռում
ես: (Մի փոքր լռելուց յետոյ): Քեզ
բարեւ եմ բերել վրաստանից... բարի
գործով եմ քեզ մօտ եկել... (Մի փոքր
լռելուց յետոյ): Հը, ինչ ես անում
այստեղ:

ՄԱՐՕ.—Մայրի մօտ եմ ապրում,
ինչպէս հրամայեմ, այնպէս կըվարւի
քեզ հետ: Հասկացա՞ր...

ԱՐՁԻԼ.—Լսել եմ. ասում են, կա-
րող ես մտրակներից ազատել... ձեռ-
քըդ ես հաւաքել ոյժը: Ամեն տեղ յա-
ջողութիւն ունես...

ՄԱՐՕ.—Ի՞նչ է, կարծում ես, թէ
չտեսայ, երբ քեզ բերին: Ամեն շոգե-
նաւի գալուն դուրս եմ գալիս նաւա-
հանգիստ... Ես գիտէի, որ քեզ պիտի
բերեն:

ԱՐՁԻԼ.—Գիտէիր, հրաեղից:

ՄԱՐՕ.—Այնպէս:

ԱՐՁԻԼ.—Ինձ ուղղակի հիւանդանոց
տարան: Ճանապարհին հիւանդ էի:

ՄԱՐՕ.—Հը՛մ...

ԱՐՁԻԼ.—Մի ամիս պառկեցի, հի-
մա բժիշկը թոյլ է տւել զբօսնելու,
մենք մի ամբողջ խումբ ենք, այ, ման

են գալիս ծովափին:

ՄԱՐՕ.—Որքան ժամանակով են բե-
րել քեզ:

ԱՐՁԻԼ.—Ութ տարով:

ՄԱՐՕ.—Երկար ժամանակով են բե-
րել:

ԱՐՁԻԼ.—Ոչինչ, կըդիմանամ. միայն
շղթաներն են շատ տանջում... Մի
տարւայ ընթացքում ոտքերս չորացել
են: Դժուար է աղաթ սովորած իգիթին
շղթայակալ լինել... Ինչո՞ւ հապա չես
հարցնում թէ ի՞նչ նորութիւն կայ
մեզանում: Հինգ տարին հանաք բան
չէ: Հայրդ մեռել է...

ՄԱՐՕ.—(Տխրալով): Գիտեմ:

ԱՐՁԻԼ.—Քոյրդ պսակւել էր Գեան-
ջայում անորդ պառաւ Լևանի հետ:
(Քմծիծաղով): Բաղարում, նրա խա-
նութում գինի էր ծախում. բայց
վերջը մեռաւ...

ՄԱՐՕ.—Մեռաւ... Սալօմէն...

ԱՐՁԻԼ.—Տարի ու կէս կըլինի. Լե-
ւանը դարդից սկսեց խմել ու խեղ-
դւեց ջրհորի մէջ... հէնց էնպէս հար-
բած:

ՄԱՐՕ.—Սալօմէ, Սալօմէ... (Լա-
լիս է):

ԱՐՁԻԼ.—Այո. ոչ ոք համարեայ չի
մնացել ոչ Սալէբում, ոչ Մասսարում:
Ես ու դու որբացել ենք, Մարօ: Մեր
աղնաւուր ընտանիքներից ամբողջ աշ-
խարհում միայն ես ու դու ենք մնա-
ցել... և երկուսս էլ տաժանակիր աշ-
խատանքի աքսորաւայրում...

ՄԱՐՕ.—(Բարկացած սրբում է աշ-
քերը): Ի՞նչ անենք. բոլորի վերջը մէկ
է... (Մի փոքր լռելուց յետոյ): Քեզ
ի՞նչպէս բռնեցին:

ԱՐՁԻԼ.—Ինքս անձնատուր եղալ
Թիֆլիսում: Ուղղում ես, պատմեմ, թէ
ինչպէս իշխանին սպանեցի և ինչպէս
անձնատուր եղայ:

ՄԱՐՕ.—Պատմիր...

ԱՐՁԻԼ.—Ձէ՛ որ մենք այն... վեր-
ջին գիշերից յետոյ... յիշում ես—երբ
չղջիկը խճճւեց քո մագերի մէջ, և սե

քեզ ասացի—«բարեւ բան չի. դուշա-
կում սա»... ու երկամր, երկամր համ-
բուրում էի քեզ և չէի կարողանում
հեռանալ... այն գիշերից յետոյ մենք
չենք տեսնւել... Միւս օրը սրբաշաւ
եկայ այդու մօտ և տեսայ, որ դու
մի երիտասարդի հետ կանգնած ես
հէնց այն շաղանակի ծառի ստերում,
որի տակ մենք գիշերներ ենք անց-
կացրել: Ձիու ոտների ձայնը լսելով
դու փախար, իսկ այն երիտասարդը
ծառի ստերից դուրս եկաւ լուսնի
դէմը և ձեռները կողքերին դնելով՝
սպասեց: Յաճ թոյլ ձիուց, դաշոյնս
հանեցի ու մօտ վաղեցի... տեսնեմ—
կըբայցս է՛ մեր Շաքրօն: Նա ձեռքը
առաջ մեկնելով ասաց. «Կանգնիր, յե-
տոյ էլ կարող ենք կուել: Ես եկել եմ
քո պատիւը փրկելու քանի դեռ ուշ
չէ: Տեսնում եմ, որ դու յիմարացել
ես սիրուց, խլացել ու կուրացել ես:
Բացի քեզ պէս յիմարից՝ էլ մի ուրիշ
վրացի չի գտնւի աղնաւկան, պատա-
ւոր տոհմից, որ պսակւէր Մարօյի
հետ»... Յետոյ ամեն բան պատմեց
ինձ: Երկար ժամանակ չէի հաւատում,
ուղում էի ներս վազել քեզ մօտ, ձեռ
տունը... բայց նա դուռով ինձ տարաւ:
Միւս օրը մենք գնացինք Թիֆլիս...
Բոլորը, բոլորը ճշմարիտ դուրս եկաւ.
վշտից ու բարկութիւնից ես ուղղակի
գժեցի: Երկու ամիս տևեց իմ տան-
ջանքը... Վերջապէս եկաւ նա, քո իշ-
խանը: Մի անգամ գիշերը ես հետա-
մուտ եղայ նրան... Ճանապարհին ա-
ռաջը կտրեցի ինքս ինձանից դուրս
եկած... Ի՞նչ ես ուզում», ես ասում
եմ. «Իշխան, Մարօի կողմից եմ քեզ
մօտ եկել»:—Հա, հրաեղ է նա».—
«Այստեղ, Թիֆլիսում, քեզ է սպա-
սում... բոլորը, ինչ որ հրամայել ես,
կատարել է. հիմա ուզում է քեզ հետ
տեսնւել»: Նա ժպտաց, բեխբեք ուր-
եց ու ասաց. «Ուղղում ես գնանք»:
Կարծես սատանան օգնում էր ինձ:
Խուլ փողոցներից անցնելով խօսում

էինք. «Ի՞նչ ես ուզում նրա հետ ա-
մուսնանալ».—հարցնում է:—«Ես եմ,
ձերդ պայծառափայլութիւն, ինչպէս
չէ... մեր գիւղերը միմեանց մօտ են:
Վաղուց նրան ճանաչում եմ... կարող
եմ թէ գիւնդրական և թէ քաղաքա-
ցիական ծառայութեան մտնել... ոչ
միայն նա. ես էլ վաղուց մտածում եմ
Պետերբուրգի մասին: Ձանձրացել եմ
այստեղ ոչխարամիտների հետ մնա-
լուց. ինչ կեանք է այստեղի կեանքը:
Դու մեծ մարդ ես, ինձ մի լաւ տեղ
կըտաս, գիտեմ, որ չես զրկիլ»: Նա
քմծիծաղ ասաց. «Կաւ տղերք էք կին-
տօներդ»: Ապա ես նրան տարայ Գու-
ռի ափը. ոչ ոք չկար... Ժայռեր էին,
ինչպէս ահա այստեղ, ջուր և երկինք.
միայն աստղերն են պայծառ փայլում
լուսածագից առաջ: Շուրջը նայեց՝ ու
տեսաւ, որ բանը վատ է՝ սուրը պա-
տանից հանեց. «Ո՛ւր ես բերել դու
ինձ, գարշելի աքարած»: Ո՛ւր,—դա-
տարան, ասում եմ, դատարան—թէ
աղջկայ պատւի, թէ իմ պատւի և թէ
մեր ամբողջ ազգի պատւի համար...
Բաւական չէն ձեզ վաճառող աղջիկ-
ները. դուք մեր հարսնացուներին,
քոյրերին ու աղջիկներին էլ էք գայ-
թակղեցնում... ո՞վ է մեզանից գար-
շելին»: Իշի գլխի չափ մի քար վեր
կալայ, խփելով գլուխիդ ու մորթեցի...

ՄԱՐՕ.—(Երեսը ծնոքերով ծածկած՝
հեկեկում է):

ԱՐՁԻԼ.—(Ինքնաբաւականութեամբ
նայում է նրա վրայ. մի փոքր լռե-
լուց յետոյ): Տուն վերադառնալով ա-
սում եմ եղբօրս. «Վերջացրի»... Շաք-
րօն միայն յօնքերը վրայ բերեց, յե-
տոյ ինձ գրկեց, համբուրեց ու ա-
սաց. «Շանը հէնց շան նման էլ պիտի
ստակեցնել... Ապրե՛ս. դու մեր ցե-
ղի պատիւը վերականգնեցիր»... Այ,
միւս շաքաթ հարսանիքս վերջացնեք
թէ չէ—դու հեռացիր, գնա դէպի սա-
րերը. չլինի թէ Մարօն քեզ մասնէ՛:
Մի երեք օր յետոյ Մասսարումն էլ

սկսեցին խօսել ուսու իշխանի սպանութեան մասին... Իսկ ես շարունակ մտածում էի. միթէ դու ինձ չես սիրում. միթէ ես քեզ պէտք եմ հղել միայն իշխանի սէրը քողարկելու համար. հասկացա՞ր համբոյժները... Զէ՞ որ մինչև հիմա էլ նրանք աչրում են իմ շրթունքներ... Իմ հոգին՝ ձգտում էր դէպի քեզ. Մտածում էի, թէ քեզ կը տանեմ հեռաւոր գիւղերը: Անցեալը կըմոռացւի... Հնչ, սկսեց եղբօր հարսանիքը: Երկրորդ օրն էր, որ հիւրերը ուրախութեամբ էին անում: Շաբաթի մի մեծ քարայծի կոտոր լիքը լցրեց գինով ու ասաց. «Թանգազին հիւրեր, անհա քանի տիկ է, որ մենք դատարկում ենք խմելով թէ իմ ու նորահարսի կենացը, թէ ձեր կենացը, թէ քաջ իգիթներին... խմել ենք թամար թագուհու յիշատակին և թէ կախիթի աջակցին թագաւոր—փառապանծ Իրակի յիշատակին: Միայն մի բան մտացել ենք. խմել մեր ցեղական, վրացական պատւի համար... թող նա աւելի մաքուր ու աւելի սպաքատ լինի՝ քան կազբէկի գազաթի ձիւնը: Մահ և անէծք նրան, ով թէկուզ մի փոքրիկ բիծ կըզցէ նրա վրայ, վրէժ սերունդից սերունդ, հօրից որդի, որ դուք թող, մինչև որ թշնամու արեւնով չլացւի, չիստակւի անարգած պատիւը»: Հիւրերը վեր թռան տեղերից, նրանց գոչիւնից պատերը դողացին: Շաբթոյ տալիս է ինձ քարայծի կոտորը. «Յմի՛ր. Արշիլ քոնն է այս թասը. դու իսկական իգիթ ես, դու մեր հպարտութիւնն ես. քո գաւաղներին էլ սովորեցրու քեզ պէս լինելը: Հէնց նոր էի գինով լի կոտորը դրել բերանիս—տեսնեմ, դու, Մարօ, կանգնած ես մեր բազի գոյն մօտ—գուհնաւ, գեղեցիկ... Կոտորը ձեռքս ընկաւ, գինին հորդանաւ թափեց կըրծքիս վրայ ու կարծես գոռան արիւնով ներկեց ինձ: Դու խառնած փախայ դէպի պարտէզ... ու լալիս էի, հեկեկում, մազերս փետում... մինչև աղաւտ... Արեգակը արդէն բաւական բարձրացել էր, յանկարծ լսում եմ, որ ամբողջ գիւղում գոռում-գոչիւն ընկաւ: Այստեղ, այնտեղ արշաւում են կազակները: Ոչինչ չեմ կարողանում հասկանալ:—Տեսնեմ, պարտէզում վազելով գալիս է Կոտէն, մեր հարկանի որդին: Տեսնելով ինձ թփի տակ՝ ըսկսեց դողալ ու շշնջում է. «Շաբթոյին ու իր կնոջը առաւօտեան գտել են մեռած. Մարօն է թուելուրել... Իսկ կազակները եկել են քեզ բռնելու՝ ուսու իշխանի սպանութեան համար. հիմա որոնում են... Հասկացայ, ամեն ջան հասկացայ... Ոչ, մտածեցի, հիմա ես անձնատուր չեմ լինի, ես դեռ պէտք է Մարօյի հետ տեսնեմ... Փախայ... Չորս տարի, ինչպէս վայրենի գազան ապրեցի սարերում, Ալիբէկի խմբում: Երբ դեռ բանտումն էիք դու, քանի-քանի անգամ փորձել եմ մի կերպ մտնել քեզ մօտ: Չյաջողեց: Յետոյ քեզ տարան. իսկ թէ ուր—ոչ ոք չգիտէր: Ես բոլորովին յուսահատեցի: Յանկարծ. Սախալինից վերադարձաւ մի թուրք, Ալիի խմբից և ասաց, թէ քեզ տեսել է այնտեղ. Պատմեց, թէ որտեղ և ինչպէս ես դու ապրում: Այն ժամանակ էլ երկար չսպասեցի, գնացի թիֆլիս և անձնատուր եղայ... Կարելի է Աստուած մեզ կըհանդիպեցնի, իսկ եթէ ուրիշ տեղ ուղարկեն, կըփախչեմ, ինձ չեն կարող պահել: Երևում է, որ Աստուած կամենում էր, որ ես ու Մարօն միմեանց հանդիպէինք և անհա ես նստած եմ նրա առաջ, նայում եմ նրա աչքերին, և դարձեալ սիրում եմ նրան, սիրում եմ, ինչպէս առաջին օրը, երբ նա ինձ պատահեց շագանակի ծառի տակ և գրկեց ինձ իր ձեռքով ձեռքերով ու սեղմեց ինձ իր ձեռքն... մարմնով... Ուր է մեր ջանքերը, Մարօ... Դու ես մեր կովկասեան տաք գիշերները. Դու է մեր համբոյժների ժամանակ լսող ծղրիտները երգը և յամիկի բռնմունքը, Դու է մեր բարի անունը, Մարօ, մեր ազնեական, տոհմական պատիւը: Միայն գերեզմաններ... (Սորապէս վրդտացած՝ ձեռքերով ծածկում է երեսը):

ՍԱՐԹ.—«Գերեզմաններ»... Իսկ ի՞նչ է նրանց փոքրիկ... քո մասնիչ եղբայրը... Նա առաջինը ինձ մատնեց քեզ. նա է, նա է մեղաւոր ամեն բանում, այն շունը... անիծւի նրա յիշատակը: ԱՐԶԻԼ.—Չհամարձակեմ... ՄԱՐԹ.—Կըհամարձակեմ... Ինչո՞ւ դու հաւատացիր: (Բռնն կերպով): Որ ես ուսմի եմ սիրել: Այո, սիրել եմ... Սիթէ դու, պիղծ կացօ, կարող էիր հաւատարեւ նրան: Ի՞նչ անենք, որ սիրում էի: Ես ինքս ամեն բան կըխոստովանէի քեզ հարսանիքից առաջ, միայն պիտի համոզէի, որ դու ինձ հետ չես խաղում, որ եթէ սիրում ես, հետ չես խաղում, որ եթէ սիրում ես, կընրես: Կարելի է ինձանից հաւատարիմ ամուսին ամբողջ վրաստանում չէր ճարել... Դուք անիծւած աւաղակներ էք և ոչ թէ մարդիկ... Խորտակեցիք իմ բաղդը... ԱՐԶԻԼ.—Դու բաղդը... իշխանի, թէ ինձ հետ: ՄԱՐԹ.—Դուք միայն ձեր մասին էք մտածում. «Պատիւ, պատիւ...»: Եք մտածում. Պատիւ մատնելը ազնուութիւն Միթէ աղջկան մատնելը ազնուութիւն է: Միթէ ազնուութիւն է անկիւնից գողի նման սպանել մարդուն... ԱՐԶԻԼ.—Նա իսկապէս գող էր... նա քեզ գողացաւ մեզանից: Հապա ինչո՞ւ նա ինքը չամուսնացաւ քեզ հետ, այլ որոնում էր մի յիմարի, որը նրանից ողորմութիւն վերցնէր կնոջ սիրոյ փոխարէն: ՄԱՐԹ.—Չամուսնացաւ, որովհետեւ արդէն պատկաւած էր: ԱՐԶԻԼ.—Գիտեմ, նրանք ամեն բան կարող են: Նրանք ամենքը այդպէս են ապրում. նրանք ամեն բան բաժանում, ամեն բան առնում են իրանց

նակ լսող ծղրիտները երգը և յամիկի բռնմունքը, Դու է մեր բարի անունը, Մարօ, մեր ազնեական, տոհմական պատիւը: Միայն գերեզմաններ, գերեզմաններ... (Սորապէս վրդտացած՝ ձեռքերով ծածկում է երեսը): ՍԱՐԹ.—«Գերեզմաններ»... Իսկ ի՞նչ է նրանց փոքրիկ... քո մասնիչ եղբայրը... Նա առաջինը ինձ մատնեց քեզ. նա է, նա է մեղաւոր ամեն բանում, այն շունը... անիծւի նրա յիշատակը: ԱՐԶԻԼ.—Չհամարձակեմ... ՄԱՐԹ.—Կըհամարձակեմ... Ինչո՞ւ դու հաւատացիր: (Բռնն կերպով): Որ ես ուսմի եմ սիրել: Այո, սիրել եմ... Սիթէ դու, պիղծ կացօ, կարող էիր հաւատարեւ նրան: Ի՞նչ անենք, որ սիրում էի: Ես ինքս ամեն բան կըխոստովանէի քեզ հարսանիքից առաջ, միայն պիտի համոզէի, որ դու ինձ հետ չես խաղում, որ եթէ սիրում ես, հետ չես խաղում, որ եթէ սիրում ես, կընրես: Կարելի է ինձանից հաւատարիմ ամուսին ամբողջ վրաստանում չէր ճարել... Դուք անիծւած աւաղակներ էք և ոչ թէ մարդիկ... Խորտակեցիք իմ բաղդը... ԱՐԶԻԼ.—Դու բաղդը... իշխանի, թէ ինձ հետ: ՄԱՐԹ.—Դուք միայն ձեր մասին էք մտածում. «Պատիւ, պատիւ...»: Եք մտածում. Պատիւ մատնելը ազնուութիւն Միթէ աղջկան մատնելը ազնուութիւն է: Միթէ ազնուութիւն է անկիւնից գողի նման սպանել մարդուն... ԱՐԶԻԼ.—Նա իսկապէս գող էր... նա քեզ գողացաւ մեզանից: Հապա ինչո՞ւ նա ինքը չամուսնացաւ քեզ հետ, այլ որոնում էր մի յիմարի, որը նրանից ողորմութիւն վերցնէր կնոջ սիրոյ փոխարէն: ՄԱՐԹ.—Չամուսնացաւ, որովհետեւ արդէն պատկաւած էր: ԱՐԶԻԼ.—Գիտեմ, նրանք ամեն բան կարող են: Նրանք ամենքը այդպէս են ապրում. նրանք ամեն բան բաժանում, ամեն բան առնում են իրանց

քաղաքներում, թէ պատիւ, թէ սէր... Իսկ յետոյ տեսնում ես, որ մարդուն վերցրել ու մի հեռու տեղ են ձգել... Այդպիսի մարդուն սպանելը քեզ է պէտք է կտրտել կենդանի ժամանակ: Օհ... (Բռնում է կուրծքը): Ցաւում է, ցաւում է այստեղ... ՄԱՐԹ.—(Ժաղրական ձեւով): Շաբթոյին աւելի հաւատացիր, քան ինձ: ԱՐԶԻԼ.—Ճշմարիտ ասա, Մարօ, չէ՞ որ դու ինձ խաբում էիր... դէ, ասա, ասա, չէ՞ որ ողջ տեղ չի մնացել ինձանում, հոգիս հեծում է, հինգ տարի, հինգ տարի... Ասա, քեզ խաբելով նա չէ՞ր հրապուրել, դուք չէ՞ք ուզում իմ ետեւ թագնաւ միմեանց սիրել: Մարօ, երգելի Աստուծոյ անունով, խոստովանիր և ես կըհեռանամ ու այլևս մենք չենք տեսնուի: Կասկածանքները ինձ տանջում են. մտածում եմ—գուցէ հարկաւոր էր նախ քան ուսմին սպանելը՝ քեզ հետ տեսնել: Պատասխանիր, Մարօ, վերցրու ինձանից այս տանջանքը... ՄԱՐԹ.—Հրմ... Այ թէ երբ ես դու խելքի գալիս: Ուշ է, Արշիլ, այդ առաջ պէտք էր: ԱՐԶԻԼ.—Ուրեմն ճշմարտութիւնը չիս տաւ: ՄԱՐԹ.—(Ուսերը վեր քաշելով): Ես ասացի: Այո, ուսերն սիրում էի, ուզում էի վերադառնալ նրա մօտ, իսկ թէ ի՞նչ դուրս կըգար դրանից, չգիտեմ: Նա ինձ ասել էր, «Արի ամուսնուդ հետ, նրան էլ գործի կըդնեմ, քեզ էլ... Ձեզ համար լաւ կըլինի: Երբ նրա հետ ամեն բան կըվերջացնես—եւ կըհեռանամ, ձեր բաղդաւորութիւնը չեմ խանգարի»: Եթէ ես վատ բան մտածէի՝ չէի հրապուրել քեզ պէս մի գլուխ թոցնողի, առաջին պատահածին կարող էի առնել: Ծանր էր ինձ համար գիւղում մնալ, ուզում էի մայրաքաղաք ընկնել, լոյս աշխարհ տեսնել: Թէ նրանց նման գիրք կարդալ և թէ լաւ շորերով ման գալ կըմոլորում, ամեն բան առնում են իրանց

բէի: Կարելի է ինձ պալատ տանէին, և ես իմ գեղեցկութեամբ փայլէի այնտեղ, ինչպէս կովկասեան երկնքի մի աստղ... բոլորին կը գերադասէի, իշխանին էլ կը վնդէի, և կը սկսէի ամուսնուս հետ լաւ ապրել: Դու ինձ դուր էիր գալիս... կը պահպանէիր ինձ, կը սիրէիր: Կարելի է, ես էլ քեզ աւելի խիստ սիրէի, էհ...
ԱՐՁԻԼ.—Սպասիր, դու ամեն բան շփոթում ես:

ՄԱՐՕ.—Շփոթում եմ... Յիմար էի ես, ահա թէ ինչ. ինքս պիտի գնայի Պետերբուրգ, նրան այնտեղ գտնէի, և ինձ չպիտի դուրս անէր, ինչ անենք, թէ ամուսնացած էր: Ես... էհ, արդէն վերջացած է:

ԱՐՁԻԼ.—Երեւի քեզ ծածուկ են դցել քո հօր տունը: Մեղանում քեզ պէսներ չեն եղել:

ՄԱՐՕ.—Ինչ օգուտ: Ո՞ւր է մեր հայրենիքը... դուք կարողացած ձեզ պաշտպանել, ամիսն գերեզմաններ... Տեղն է, տեղը ձեզ, մասնախնդիրդ: Հիմայ Շաքրօն գետնի տակ փթում է ջահէլ կնոջ հետ: Այդպէս էլ պէտք էր շանը: Ափսոս միայն, որ դու ինձանից ազատեցիր: Ինչ իբիթ ես, հա, հա, հա... Շրջագետնի ետեւից արտաբախող վազեցիր: Քեզ նմանին սիրել: Չէ, իմ բազէ, քո փետուրները ազատւի փետուրներ են: Հեռացիր ինձանից:

ԱՐՁԻԼ.—Մարօ, Մարօ, հիմայ պէտք է անիծել. մենք երկուսս էլ կորանք: Մեր ընտանիքների արեւը մեզ վրայ է, այլևս մենք չպիտի ապրենք: Աւելի յաւ է մեղքերս քաւենք:

ՄԱՐՕ.—Քաւիր ինչպէս ուզում ես, միայն հեռացիր ինձանից: Ես ինքս ինձ համար կապաշխարեմ:

ԱՐՁԻԼ.—Աքսորավայրում... արքայազն չի լալ անմեղ արեւը. արքայազնում քաւութիւն չկայ:

ՄԱՐՕ.—(Բռնկւած): Ես սիրել եմ, ուրեմն ինձանում վեղք չկայ: Սիրոյ

համար ամեն բան ներելի է:

ԱՐՁԻԼ.—Իսկ Մայօրին... Դու հիմա նրան նոյնպէս սիրում ես:

ՄԱՐՕ.—(Տխուր): Ուզես-չուզես, պիտի սիրես: Էհ, թող այդ բանը: Վախենում եմ, — չլինի թէ նրան խեղդեմ... Մի շուտով հեռանայի այստեղից...

ԱՐՁԻԼ.—Ինչո՞ւ դու...:

ՄԱՐՕ.—Ինչո՞ւ: Մի քիչ աւելի ապրիր կալանաւորների հետ, կը տեսնես: Մի ամիս է, ինչ այստեղ ես, իսկ ես հինգերորդ տարի... յոգնել եմ...

ԱՐՁԻԼ.—(Երկար լուռ ծիւնից յետոյ): Ուրեմն, այն բոլորից յետոյ, ինչ որ եղել է, ես պիտի ամուսնանայի քեզ հետ:

ՄԱՐՕ.—Տղամարդը պիտի կարողանայ տիրել կնոջը, հակառակ դէպքում՝ նա գրօշ չարժէ: Այ, ուսուր կարողացաւ...

ԱՐՁԻԼ.—(Բողբոլով շփոթւած): Դժուար եմ հասկանում մեր դրժները: (Մի փոքր լոկուց յետոյ): Յիշում ես դու իմ ձիուն, դու նրան շոյում էիր իմ հեծնելու ժամանակ: Նա էլ չկայ հիմայ... Ախ, մեր գիշերները, կովկասեան գիշերները, մեր երգերը... այլևս ոչինչ չկայ:

ՄԱՐՕ.—(Մի փոքր լոկուց յետոյ): Բոլորը կարելի է վերագործնել:

ԱՐՁԻԼ.—Ի՞նչ:

ՄԱՐՕ.—Բոլորը կարելի է վերագործնել. ազատւի պէս մի կուսիր:

ԱՐՁԻԼ.—(Աղչւած): Ասա:

ՄԱՐՕ.—(Կատկածով): Ո՞վ է իմանում ինչու համար ես դու եկել: Վարդապետ ես ձեռնարկում քեզանից կամ ինչ որ բան ես թաղցնում:

ԱՐՁԻԼ.—Ի՞նչ պիտի թաղցնեմ, ահա ես ամբողջովին:

ՄԱՐՕ.—Ճշմարիտ: Ինձ չէս մատնի:

ԱՐՁԻԼ.—Ես քեզ պէս չեմ, դու էիր, որ ինձ կազակներին մատնեցիր:

ՄԱՐՕ.—Էհ, միթէ այն ժամանակ

ես գիտէի իմ արածը: (Յուզւելով): Լսիր, ուզում ես անցեալը վերադարձնել: Մեռածները գետնի տակ են, նրանց չենք կարող կենդանացնել, իսկ մենք դեռ կենդանի ենք և կարող ենք մտածել մեր մասին:

ԱՐՁԻԼ.—Յետոյ:

ՄԱՐՕ.—Լսիր. ես այլևս ոյժ չունեմ այստեղ մնալու: Ես, միևնոյն է, պիտի փախչեմ... Ուզում ես միասին...

ԱՐՁԻԼ.—(Շայելով նրա երեսին, անորոշ): Ուզում եմ:

ՄԱՐՕ.—(Յափշտակւած): Դէ լսիր: Այստեղ ճապոնացիներ կան. նրանց նաւակները շատ անգամ մօտենում են ափին. իսկ երէկ մի նաւ էր երևում, և մենք հաւաքւել էինք դիտելու: Նըրանք գիտեն, որ ես մայօրի հետ այնպէս եմ, ինչպէս ամուսին... Բոլոր բանալիներն ինձ մօտ են: Նրանք ինչ որ թղթեր են ուղում, գնազան յատակագծեր, բայց դրանց բանալիները նա ինձ չի տալիս: Եթէ մի կերպ ձեռք բերեմ—հէնց նոյն գիշերը կը փախչեն: Նաւը կը մօտենայ նշանակւած տեղին ու կը վերցնէ ինձ. ես այդ պայմանով միայն յանձն եմ առել... Ուզում եմ ինձ հետ: Ծաղօնիալից մենք Ամերիկա կանցնենք. ասում են այնտեղ լաւ է, կարելի է և թիւրքիա գրնալ: Փող կը տան, շատ են խոստացել: Տեսուչը ինձանից վախենում է, կասեմ, որ հիւանդանոցից քեզ բաց թողնէ ինձ մօտ հիւր գալու. մենք մի երկրից ենք, կը հաւատայ, իսկ եթէ չհաւատայ—եւ ուրիշ կերպ կանեմ: Նրանք բոլորը իմ շուրջն են. ես քեզ կը թաղցնեմ մայօրի տանը, հէնց որ նրան կը վերջացնեմ, դու պահարանը կը կոտորես, ես գիտեմ որն է... հասկացար: Ինչո՞ւ ես լուռ: Քնած ես, ինչ է...

ԱՐՁԻԼ.—Ասում ես միասին...

ՄԱՐՕ.—(Անհամբերութեամբ): Այո, միասին, ուզում ես:

ԱՐՁԻԼ.—(Չսպելով նեարդային

սարսուռ): Ուզում եմ, ուզում եմ... Էրբ կը լինի այդ բանը:

ՄԱՐՕ.—Կարելի է միւս շաբաթ. միայն պէտք է օրը նշանակել, որ նաւը պատրաստ լինի:

ԱՐՁԻԼ.—Ուրեմն դեռ երկար պիտի սպասել:

ՄԱՐՕ.—Աւելի վաղ աջողեցնելը դժուար է:

ԱՐՁԻԼ.—Աւելի լաւ չէ՞ այսօր, հը:

ՄԱՐՕ.—(Շշկլւած): Ի՞նչ ես ասում:

ԱՐՁԻԼ.—Հէնց հիմա... (Բռնում է նրա ձեռքը): Հիմայ, հը...

ՄԱՐՕ.—Արչիլ, ի՞նչ պատահեց քեզ, ինչ տեսակ ես նայում, Արչիլ, թող ինձ...

ԱՐՁԻԼ.—Միասին, միասին, հէնց հիմայ... (Նրան դէպի իրան է քաշում):

ՄԱՐՕ.—(Վախեցած): Թող ինձ, սատանայ, կը կանչեմ գիւղերներին...

ԱՐՁԻԼ.—(Բաց թողնելով նրան, չարախիսն ժպտով): Դէ, կանչիր...

ՄԱՐՕ.—(Գուշակելով): Ի՞նչ արի ես... (Գլուխը ափերի մէջ առնելով): Ախ...

ԱՐՁԻԼ.—(Կամաց): Ինձ մօտ արի, աւելի մօտ, աւելի մօտ:

ՄԱՐՕ.—(Ամբողջովին դողալով սողում է): Արչիլ, մի սպանիր, մի սպանիր, Արչիլ... (Գրկում է նրա ծունկը, բռնն աղաչանքով): Ես սիրել եմ քեզ և պիտի սիրեմ. Շաքրօն խաբել է, ես էլ սուտ էի խօսում...

ԱՐՁԻԼ.—Նա ինքն էլ խոստովանեց:

ՄԱՐՕ.—Ո՞վ:

ԱՐՁԻԼ.—Ռուսը:

ՄԱՐՕ.—Նա խաբել է: Ես անմեղ էի, Արչիլ: Ես անձնատուր չեմ եղել նրան: Երգում եմ քո առաջ, Արչիլ...

ԱՐՁԻԼ.—«Հօրեց՝ որդի, որդուց՝ թոռ... մինչև որ անարգւած պատիւը շողայ, ինչպէս Կազեկի գագաթի ձիւնը»:

ՄԱՐՕ.—(Գալարելով նրա ոտների մօտ): Արչիլ, ներքը, ես քեզ յաւի-

տեան կըսիրեմ, յաւիտեան:

ԱՐՁԻԼ.—(Դանակը հանելով կըռնատակից): Դու կարծում էիր, թէ ես քեզ համար աւագակ դարձայ, քեզ համար անձնատուր եղայ, կազակներին, քո սիրուց ես աքսոր եկայ, մեր նախնեաց պատէրները ոտի տակ արեցին... Թէ Շաքրոյի արիւնը, թէ նրա կնոջ արիւնը, թէ մեր ցեղական պատիւը—բոլորը քո սիրոյ համար էր:

ՄԱՐ.—(Նրա գրկում, վարելով նրա պարանոցին, բռնն աղաչանքով): Մի սպանիր... Ես այնքան տանջուել եմ, ես ամբողջովին մեղաւոր եմ: Մի սպանիր, Արչիւր, իմ գովկասեան ար-

ծիւ... Թող մեզքերս քաւեմ, իմ սիրեցեալ...:

ԱՐՁԻԼ.— Զղջայ, խոտառվանիւ շուտով, ահա, գալիս են այստեղ, ցոյց են տալիս մեզ, ծիծաղում են, շուտ...:

ՄԱՐ.—(Չեղբերը քարճարացնելով դէպի վեր): Տէր Աստած, ներքի ինձ:

ԱՐՁԻԼ.—(Դանակով ուժեղ հարւած է տալիս նրա կրծքին):

ՄԱՐ.—(Մեղմ ճիւղ է արձակում եւ թերում է նրա կրծքին):

ԱՐՁԻԼ.—(Սեղմելով նրան իր կրծքին): Դու էլ ինձ ներքի, իմ սէր, իմ արժուահի: (Համբուրում է նրան): Հիմա վերջացաւ, մենք վերջինն ենք... Գոհ ես դու, եղբայր...:

Վ. ԱՄԲԱՆՆԻՍԻ



ՀՀ Ազգային գրադարան



NL0318594

